23464

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱ

ՍԱՔԻԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ԳԵՂ. ՁԿՈՒՀԻՆ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՖՐՈՆՏՈՒՄ

331.4
Ս-28

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

1·9·3·1

29.07.2013

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏ. 1515
ԳՐԱՌԵՊ. 6187 (Բ)
ՊԱՏ. 766
ՏԻՐԱԺ 6000

331.4
Ս-28

15 JAN 2010

14754

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՖՐՈՆՏՈՒՄ

Կուսակցությունն անցել է բայլշեվիկյան յերկրորդ գարնանացանի աշխատանքներին:

Կազմակերպել ու մարտական կարգով անցկացնել այս գարնանացանը՝ կնչանակի ել ավելի արագացնել յերկրի ինդուստրիացման տեմպը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը:

Այս տարվա գարնանացանն անցկացնելիս մեր առաջ դրված են մի շարք մարտական խնդիրներ՝ լայնացնել ցանքատաշտերը, լայնացնել տեխնիկական կուլտուրաների՝ առաջին հերթին բամբակի դաշտերը, բարձրացնել բերքատվությունը, զարգացնել անասնապահությունը, զարգացնել անասնապահության կերի բազան, զարգացնել գյուղատնտեսության տեխնիկական բազան և այլն:

Այս բոլոր խնդիրները կարող ենք իրագործել այն դեպքում, յեթե մենք անցնենք գյուղատնտեսության զարգացման բարձր տեմպերի, յեթե մենք գյուղն առաջ տանենք կոլլեկտիվացման ճանապարհով: Անհատական մանր, ցրված տնտեսություններն ի վիճակի չեն լինի բայլշեվիկյան գարնանացանի առաջ դրված վերոհիշյալ բոլոր մարտական խնդիրներն իրագործել: Մեր մեծ ուսուցիչ Լենինն ասել է.—«Յեթե մենք առաջվա նման մնանք մանր տնտեսություններում,

23464

թեկուզ վորպես ազատ բաղաքացի՝ ազատ հողի վրա. մեզ, միևնույն ն, ապառնում ե անխուսափելի կորուստ»:

Այս տարվա գարնանացանը նոր թափ պետք ե տա, ուժեղացնի և լայնացնի գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը գյուղում:

Համկոմկուսի կենտկոմի վորոշմամբ՝ հնգամյակի 3-րդ տարում (1931 թ.) գյուղացիական տնտեսությունների կիսից ավելին ընդգրկել կոլեկտիվ տնտեսություններում: Հայաստանի կոմկուսի կենտկոմի վորոշմամբ՝ 1931 թ. կոլեկտիվացման պետք ե յենթարկել Հայաստանի չքավոր ու միջակ տնտեսությունների 20–25 տոկոսը: Այդպիսով, այս տարվա գարնանացանը պիտի հզոր խթան հանդիսանա կոլտնտեսաշարժման նոր վերելքի ստեղծման և հազարավոր չքավոր ու միջակ գյուղացիներին ընդգրկի կոլտնտեսություններում:

Կարո՞ղ ենք արդյոք իրագործել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման այս խնդիրները: Կարո՞ղ ենք արդյոք ապահովել գարնանացանի հիմքում դրված՝ կոլտնտեսաշարժման վերելքի ստեղծման գործը: Այո՛, հնարավոր ե իրագործել, վորովհետև կան մի շարք փաստեր, վորոնք լավ դրավական են հանդիսանում այդ գործի համար: Վորո՞նք են դրանք: Նախ՝ անցյալ տարվա հաջողությունները:

Յեթե մեզ մոտ, Հայաստանում 1929 թվին կոլտնտեսությունների ցանքսաղաչտերն ընդգրկում ելին ցանքսաղաչտերի 2,5 տոկոսը, ապա բայլեվիկյան առաջին գարնանացանին ընդգրկում ելին արդեն 13 տոկոսը: Յեթե Հայաստանում 1928 թվին կար ընդամենը մոտ 6 կոլտնտեսություն, վորոնք ընդգրկում ելին մոտավորապես 376 տնտեսություն, ապա 1930 թվի գեկտեմբերին արդեն կային 480 կոլտնտեսություն՝ 20·100 չքավոր ու միջակ տնտեսություններով, վորը կազմում ե Հայաստանի գյուղացիական տնտեսությունների մոտ 12,5 տոկոսը: Կուսակցության կարեվոր հաջողությունը կայանում եր նրանում, վոր նա լենինյան ճիշտ քաղաքականության կիրառմամբ կարողացավ գյուղական հիմնական մասսաները վճռականապես թեքել գարգացման զեպի սոցիալիստական ճանապարհը, վոր կուսակցությունը հաջողվեց «կազմակերպել արմատական բեկումն գյուղական մասսաներում և տանել իր յետևից չքավոր ու միջակ մասսաներին, չնայած բազմաթիվ դժվարություններին, չնայած ամեն տեսակի մութ ուժերի գիմադրմանը՝ սկսած կուլակներից, տերտերներից մինչև աջ ոպպորտյունիստները» (Ստալին):

Կոլտնտեսություններում դգալի չափով բարելավվել ե չքավոր ու միջակ գյուղացիների դրությունը: Հայաստանի լեռնային մասում չքավոր տնտեսությունը, վորը մինչ կոլտնտեսություն մտնելը ստանում եր միջին հաշվով 197 ռ. յեկամուտ, կոլտնտեսությունում այս տարի ստացել ե 415 ռուբլի: Միջակ տնտեսությունը՝ 388 ռ. փոխարեն ստացել ե 516 ռ. յեկամուտ: Դաշտային մասում (Ղուրդուղուլի) չքավոր գյուղացին մինչ կոլտնտեսություն մտնելը ստացել ե, միջին հաշվով, 410 ռ. յեկամուտ, իսկ այս տարի կոլտնտեսություններում նա ստացել ե 856 ռ., միջակը՝ 587 ռուբլու գիմաց այս տարի ստացել ե 976 ռուբլի յեկամուտ: Աշնան ցորենի բերքը կոլտնտեսություններում բերել ե 11,2 ցենտներ, իսկ անհատական տնտեսություններում՝ 9,1 ցենտներ (Կոլտնտակենտրոնի ուսումնասիրություններ):

16157-58

Այս տարի գյուղատնտեսությանը տրված արժի 3.500.000 ռ. մեքենա, մինչդեռ անցյալ տարի տրվել է միայն 1.334.000 ռուբլու: Անցյալ տարի մենք ունեինք մեքենա-տրակտորային յերկու կայան, վորոնք ունեյին 200 տրակտոր, այս տարի պիտի ունենանք 3 կայան և մեկ կոլոննա: Ահա այս փաստերը և անցյալ տարվա մեր ունեցած հաջողությունները ապահովում են, վոր այս տարվա գարնանացանի առաջ դրված խնդիրները, մանավանդ գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի լայնացման և ցանքադաշտերի 30 տոկոսը կոլտնտեսություններում ընդգրկելու խնդիրը կիրագործվի:

Գործնական ի՞նչ խնդիրներ են դրված այս տարվա գարնանացանի կամպանիայի առաջ: Նախ՝ անհրաժեշտ է ավելացնել ցանքադաշտերը 26,8 տոկոսով: Անցյալ տարի ավելացված էր միայն 11 տոկոսով: Գլխավորապես անհրաժեշտ է լայնացնել տեխնիկական կուլտուրաների, առաջին հերթին բամբակի ցանքադաշտերը: Բամբակը մեզ համար այժմ խոշոր նշանակություն ունի: 16-րդ համագումարը վորոշել է ծանր արդյունաբերության հետ միասին է՛լ ավելի զարգացնել նաև թեթև արդյունաբերությունը: Թեթև արդյունաբերության հիմնական ճյուղերից մեկը համարվում է տեքստիլ արդյունաբերությունը, վորի զարգացումը գլխավորապես կախված է նրանից, թե վորքան շատ կարող ենք մենք նրան հում նյութ մատակարարել և ապահովել նրան բամբակով: Շատ կտոր ստանալու համար հարկավոր է շատ բամբակ տալ: Բամբակի ցանքերի տարածության լայնացումը հիմա մեր կուսակցության համար խոշոր քաղաքական-տնտեսական նշանակություն ունեցող խնդիր է: 1931 թ.

գարնանացանին ծրագրված է բամբակի ցանքերի տարածությունն Անդրկովկասում հասցնել 250.000 հեկտարի, մինչդեռ անցյալ տարի բամբակի ցանքադաշտերի տարածությունը յեղել է միայն 150.000 հեկտար: Հայաստանում այս գարնանացանին պիտի բամբակի ցանքադաշտերը հասցնել 25.000 հեկտարի՝ անցյալ տարվա 16.000 հեկտարի դիմաց: Ցանքադաշտերի ավելացումը պիտի կատարվի ի հաշիվ մինչ այժմ չօգտագործված հողերի և բամբակացան շրջաններից հացահատիկային բույսերը դուրս հանելուն: Բամբակացան շրջանների՝ Ղուրդուղուլիի, Ղամարլվի, Վեդիի, Վաղարշապատի հողերն համարյա ամբողջովին պիտի դարձնել բամբակի ցանքադաշտեր: Խոշոր տեղ են բռնելու այս տարվա գարնանացանի պլանում կուլտուրական այլ մշակույթները՝ ծխախոտը, վուշը և այլն: Այդ մշակույթներն այս տարի պետք է ավելացնել 78,6 տոկոսով:

Հիմնական այս թվերը պիտի իմանա մեր յուրաքանչյուր պատգամավորուհի, յուրաքանչյուր գեղջկուհի:

Ցանքադաշտերի լայնացման հետ մեկտեղ մեր առաջ դրված է՝ բարձրացնել բերքատվությունը: Դեռ այս տեսակետից մենք յետ ենք մնում կապիտալիստական յերկրներից: Այս խնդիրը մեր կարեվորագույն խնդիրներից մեկն է և յեթե այսոր մեր առաջ դրված է՝ իրագործել բարձր տեմպեր գյուղատնտեսության արդյունքների ավելացման տեսակետից, ապա դրա ամենաառաջին պայմաններից մեկն է՝ բարձրացնել բերքատվությունը: Այս տարի մեզ անհրաժեշտ է հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը բարձրացնել 11.1 տոկոսով և բամբակի ամեն մի հեկտա-

բից սահմանել 11 ցենտներ՝ կամ 66 փութ բամբակ։ Այս հնարավոր է իրագործել այն դեպքում, յեթե կիրառենք ագրոձեռնարկումները, յեթե պարարտացնենք հողը, յեթե վոչ մի սերմ առանց զտելու չցանենք հողը։

Այս տարի գարնան գյուղկոմպանիան անցկացնելիս մեր առաջ դրված է ավելի վճռական կերպով զարգացնել անասնապահությունը, այն էլ զարգացնել սոցիալիստական հիմունքներով։ 1931 թ. գարնանացանը պիտի անցնի անասնապահական կոլտնտեսությունների և խորհրդային տնտեսությունների զարգացման նշանաբանի տակ։ Մոչոր յեղջյուրավոր անասունները պիտի ավելացնել 7 տոկոսով, կոլտնտեսություններում անասունները պիտի ավելացնել 100 տոկոսով։ Հայաստանում այս տարի պիտի կազմակերպվի տասը խոշոր խորհրդային տնտեսություն։

Անասնապահության զարգացման ապահովումը խոշոր չափով կախված է կերի խնդրի կանոնավորումից։ Առանց կերի չի կարելի պահել ու զարգացնել անասուններ։ Սրա համար ծրագրված է այս տարի պատրաստել 125·000 տոն սիլոս։

Գարնանացանի կամպանիայի առաջ դրված այս խոշոր մասշտաբի խնդիրները հնարավոր է իրագործել միայն այն դեպքում, յեթե այդ խնդիրների շուրջը մոբիլիզացիայի յենթարկվեն բանվորների, կոլտնտեսականների, չքավոր ու միջակ գյուղացիների, դրանց թվում բանվորուհիների, կոլտնտեսուհիների, չքավոր ու միջակ գեղջկուհիների ուժերը։ Լենինն ասել է.— «Խորհրդային իշխանության սկսած գործն առաջ կգնա միայն այն ժամանակ, յերբ Ռուսաստանում այդ գործին կմասնակցեն միլիոնավոր ու միլիոնավոր կանայք»։

Այս դեպքում էլ հարկավոր է դեկավարվել Լենինի պատգամով և մասնակից դարձնել աշխատավոր գեղջկուհիների վողջ մասսաները՝ գարնանացանի կամպանիան հաջողությամբ անցկացնելու համար։

Բայլեվիկյան յերկրորդ գարնանացանն անցկացնելիս հաշվի պիտի առնել անցյալ տարվա գարնանացանի սխալները և ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի այդ սխալները չկրկնվեն նաև այս տարի։

Անցյալ տարի գարնանացանի կամպանիայի ընթացքում միջակի վերաբերմամբ թույլ տված սխալների հետ միասին մեր կուսակցական կազմակերպությունները չկարողացան ոգտագործել նաև կանանց ամող ակտիվությունը։

Մեր յերկրի վերակառուցման ներկա շրջանում, յերբ կուսակցությունը սոցիալիստական հարձակում է կատարում բոլոր ֆրոնտներում, աշխատավոր գյուղացիների հոծ մասսան ակտիվացել է, նրա հետ զուգընթացաբար ակտիվացել են նաև աշխատավոր գեղջկուհիները։ Գեղջկուհիների ակտիվությունը, վոր ավելի ցայտուն կերպով հայտարերվեց խորհուրդների, պատգամավորների ընտրությունների, հացամթերման, գարնանացանի, կոլտնտեսարժման և այլ կարևոր կամպանիաներ անցկացնելիս, կրկին անգամ ապացուցեց, վոր աշխատավոր գեղջկուհիների լայն մասսաները դուրս են յեկել դիտելու դերից և լծվել են սոցիալիստական շինարարության գործնական աշխատանքներին։

Սակայն անցյալ տարի գարնանացանի կամպանիան անցկացնելիս պարզվեց, վոր վոչ բոլոր տեղերում և վոչ բոլոր կուսակցական կազմակերպությունները կարողացան լիովին ոգտագործել կանանց այդ ամող ակտիվությունը՝ գարնանացանի կամպանիան

հաջող անցկացնելու համար: Դրա հետեվանքը չեղավ այն, վոր գեղջկուհիների հետամնաց խավը, վոր դեռ լավ չէր հասկանում դասակարգային պայքարի իմաստը, ընկավ դասակարգային թշնամու՝ կուլակի ազդեցության տակ: Կուլակը մեր աշխատանքները խանգարելու համար տարածել եր մի շարք պրովոկացիաներ, վոր իբր թե «կոլխոզ գրվեն՝ յերեխաներից կհավաքեն, կտանեն Մոսկվա, վոր Խորհրդային Միությունը յերեխաներին սապոնով պիտի փոխի Ամերիկայի հետ, վոր կոլխոզներում բոլորը 60 մետրանոց վերմակի տակ պիտի պառկեն, վոր կոլխոզնիկները Փութով հաց պիտի ստանան» և այլ նման պրովոկացիաներ:

Այդպիսով, դրա հետեվանքը չեղավ այն, վոր գեղջկուհիների հետամնաց մասսան վորոշ տեղերում դուրս յեկավ կոլտնտեսությունների կազմակերպման, խորհրդային իշխանության, կոմկուսակցության կարեվոր միջոցառումների դեմ: Նույնիսկ Ղուրդուղուլի մի գյուղում, յերբ Յերեվանի ուսակերտներից բրիգադ եր գնացել յերեխաներին հաշվի առնելու՝ մանկական հրապարակների համար, կուլակի պրովոկացիաներից վախեցած կանայք հարձակվել եյին այդ բրիգադի վրա՝ ասելով. «Մեր յերեխաներին թույլ չենք տա, վոր ցուցակագրեք և Մոսկվա ուղարկեք»: Մի այլ գյուղում մի ծեր կին մոտեցել և բջիջի քարտուղարին և ասել է —«Յես թույլ չեմ տա, վոր իմ ընտանիքը կոլտնտեսության մտնի, քանի վոր դուք վորոշել եք կոլխոզի բոլոր ծեր, անընդունակ կանանց կոտորել, ինչու՞ չեք թողնում իմ մահով մեռնել», մեկ այլ շրջանում մի յերիտասարդ հարս լացակումած ընկնում է քաղաքից յեկած բրիգադից մեկի վոտները և ասում —«Յես չեմ ուզում կոլտնտեսությունում բոլոր տղա-

մարդկանց կինը դառնալ»: Նման որինակներ կարելի յե շատ շրջաններից բերել: Սա ցույց է տալիս, վոր անցյալ տարվա գարնանացանն անցկացնելիս մենք չկարողացանք մի շարք շրջաններում ու գյուղերում գեղջկուհիների մեջ ծավալել բացատրական լայն աշխատանք գարնանացանի հիմնական խնդիրների շուրջը, չկազմակերպեցինք պայքարը կուլակային պրովոկացիայի դեմ և անհրաժեշտ կերպով չօգտագործեցինք կանանց ակտիվությունն ընդդեմ կուլակների՝ գարնան գյուղական կամպանիայի շուրջը:

Այս տարվա գարնանացանի կամպանիան անցնելու յե դասակարգային պայքարի ել ավելի սրված պայմաններում: Դասակարգային թշնամին դարձյալ պիտի աշխատի խանգարել գարնանացանի աշխատանքները: Բոլշեվիկյան յերկրորդ գարնանացանը, վորը պիտի ամրացնի մեր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, անշուշտ դրանով ավելի մեծ հարված կտա դասակարգային թշնամուն, կսահմանափակի նրա ակտիվը և հնարավոր պայմաններ կստեղծի համատարած կոլեկտիվացման բազայի հիման վրա կուլակին, վորպես դասակարգ, լիկվիդացիայի յենթարկելու քաղաքականությունն արագ կերպով անցկացնելու համար: Անշուշտ կուլակն իր դիրքերը հեշտությամբ չի զիջի այնպես, ինչպես չի զիջի առանց կռվի և վոչ մի մեռնող դասակարգ: Նա կաշխատի յերկարացնել իր կյանքը՝ ամեն միջոց ձեռք առնելով՝ խանգարելու գարնանացանի աշխատանքները: Կխանգարեն նաև մեր աշխատանքներին կուսակցության հիմնական գծից շեղվողները՝ աջ և «ձախ» օպորտունիստները:

Աջերը, վորոնք զինաթափ են լինում մեր ամեն մի

դժվարություններից, աշխատել են և աշխատում են դանդաղեցնել գյուղի սոցիալիստական վերակառուցման գործը, աշխատում են կուսակցությունը յետ պահել կոլեկտիվացման արագ թափից, այդպիսով ջուր լցնելով կուլակի ջրաղացին:

Հենց դրա համար ներկայումս ամենագլխավոր վտանգը հանդիսանում է աջ թեքումը, որի դեմ անխնա պայքարելով՝ հնարավոր կլինի գարնանացանի մարտական խնդիրները կատարել:

Սակայն աջ թեքման դեմ պայքարելով՝ չի կարելի աչքաթող անել «ձախ» սխալների ու խոտորումների դեմ պայքարելու գործը, քանի որ «ձախ» սխալները կոլտնտշարժման մեջ այնպիսի սխալներ են, որոնք ստեղծում են նպատակահարմար իրադրություն՝ ուժեղացնելու և ամրացնելու աջ թեքումը կուսակցության մեջ» (Ստալին):

Սիրցով-Լոմինաձեյի աջ-«ձախ» օպորտունիստական յերկերեսանի բլոկը, որը թերագնահատում է կոլեկտիվացման հաջողությունը, բացասում է գյուղացիների դարձը դեպի սոցիալիզմ, նույնպես հանդիսանում է կուլակի ագենտուրան կուսակցության մեջ:

Անշուշտ այս տարի գարնանացանի կամպանիայի հաջողությունը կախված կլինի նրանից, թե ինչպես մենք՝ հաշվի առնելով անցյալ տարվա գարնանացանի ընթացքում կատարված սխալները՝ կծավալենք աշխատանքն աշխատավոր գյուղացիների և գեղջկուհիների մեջ, կնախապատրաստենք նրանց՝ գարնանացանի մարտական խնդիրները կատարելու, կնախապատրաստենք նրանց՝ դասակարգային թշնամուն և նրա ագենտներին՝ աջ և «ձախ» օպորտունիստներին և նրանց

նկատմամբ հաշտվողական վերաբերմունք ունեցողներին հակահարված տալու:

Գարնանացանի մարտական խնդիրները կյանքում կիրառելու գործում շատ մեծ անելիքներ ունեն գեղջկուհիները, միայն անհրաժեշտ է սկզբից նեթ մոբիլիզացիայի յենթարկել նրանց այդ խնդիրների շուրջը և օգտագործել նրանց աճող ակտիվությունը:

Շրջանային կին ակտիվի խորհրդակցություններում, պատժողովներում, կոլտնտեսուհիների նիստերում պետք քննության յենթարկել գարնանացանի շըրջանային և գյուղական պլանները: Հասցնելով գարնանացանի պլանը մինչև գյուղ, կոլտնտեսություն, գյուղական տնտեսություն՝ պետք մշակել գեղջկուհիների կոնկրետ անելիքները և պայքարել պլանների կրճատման տենդենցների դեմ: Գեղջկուհիների ժողովներում պետք քննության յենթարկվի կուլակային տնտեսությունների ցուցակը, որոնց տրվելու յեն հաստատուն պլանային առաջադրանքներ: Պատժողովները պետք հոկեն, որ չկրկնվի անցյալ տարվա փորձը, յերբ բազմաթիվ շրջաններում կուլակային տնտեսությունները կարողացել եյին թաքցնել բամբակի համար պիտանի հողերը և ցանել եյին հացահատիկային կուլտուրաներ:

Բացատրելով գեղջկուհիների լայն ժողովներում գարնանացանի հիմնական խնդիրները՝ պետք նրա հոսանք տալ դեպի կոլտնտեսությունները: Այս գարնանացանին Ղուրդուղուլիի կոլեկտիվացման տոկոսը պետք է հասցնել մոտավորապես 55-ի, Ղամարլվում՝ 40-ի, Վաղարշապատում՝ 42-ի, Վեդիում՝ 13-ի: Այս հնարավոր է կատարել այն դեպքում, յեթե պատժողովները, կոլտնտեսուհիները ունեն կուսակցությունը և

համախմբեն իրենց շուրջը մենատնտեսներին՝ նրանց փաստերով ապացուցելու կոլտնտեսությունների առավելությունները: Դեռ կան կոլտնտեսականներ, վորոնք խորթ աչքով են նայում մենատնտեսներին: Մինչդեռ 16-րդ համագումարը ընկ. Ցակովլևի բերանով ասել է, վոր «մենք չքավոր-միջակ մենատնտեսներ գյուղացիների վրա նայում ենք վոչ թե վորպես ոտարի անհատական տնտեսության վրա, մենք հիմա նրանց վրա նայում ենք վորպես վոչ կոլտնտեսականների, վորոնք դեռ չեն ցանկանում մտնել կոլտնտեսություն, բայց վորոնց կոլտնտեսությունների մասսայական փորձը շատ կարճ ժամանակում կհամոզի կոլտնտեսության ուղին անցնելու անհրաժեշտությունը»: Այսպիսով անհատ տնտեսատերը հանդիսանում է վաղվա կոլտնտեսականը:

Այս պետք է իմանա յուրաքանչյուր կոլտնտեսուհի և աշխատի այդ վոչ կոլտնտեսականներին համոզելու՝ կոլտնտեսության մեջ մտնելու: Հենց այս տարվա գարնանացանը պետք է խթան դառնա նորանոր չքավոր կոլտնտեսություններում ընդգրկելու:

Գեղջկուհիներին պետք է մասնակից դարձնել գարնանացանի կամպանիայի հետ կապված մի շարք խնդիրների լուծման գործին:

Գարնանացանի հիմնական խնդիրներից մեկն է ժամանակին վար ու ցանք սկսելը. սրա համար հարկավոր է հենց այժմյանից անցնել գյուղատնտեսական մեքենաների վերանորոգման գործին: Գյուղատնտեսական ինվենտարի նորոգումը, այդ խնդրին ժամանակին լուծում տալը մեծ չափով կապահովի գարնանացանի հաջողությունը: Դեռ գյուղերում կան մարդիկ, վորոնք ամբողջովին իրենց հույսը դնում են միայն նոր

մեքենաներ ստանալու վրա և աչքաթող են անում հին մեքենաները, գյուղում գտնված միջոցների ոգտագործումը: Ճիշտ է, այս տարի գյուղին շատ մեքենաներ են տրվելու, այս տարի մեքենամատակարարումը անցյալ տարվա համեմատությամբ աճելու է 152 տոկոսով, սակայն այնուամենայնիվ, վորպեսզի պլանով նախատեսված ցանքատարածները վարեն ու ցանեն, պետք է ոգտագործեն նաև ունեցած մեքենաները: Հարվածելով նման տենդենցները, պատժողովները, գեղջկուհիները պետք է ոգնեն՝ հաշվի առնելու և վերանորոգելու գյուղում ունեցած բոլոր գյուղատնտեսական մեքենաները: Այդ պետք է կատարեն շատ կարգով, վորպեսզի չուշանա վարն ու ցանքը: Գարնանացանի կամպանիայի համար խոշոր նշանակություն ունի սերմի պատրաստման խնդիրը: Անցյալ տարի այս տեսակետից վորոշ դժվարությունների յենք հանդիպել: Մի շարք շրջաններում, սերմի բացակայության պատճառով, հնարավոր չի յեղել ծրագրված պլանը իրագործել: Հույս դնել, թե ամբողջ սերմը կստացվի կենտրոնից՝ չի կարելի. անհրաժեշտ է սերմերի, մանավանդ կարտոֆիլի և այլն՝ մի մասը հավաքել գյուղացիներից: Սերմի ֆոնդ ստեղծելը անհրաժեշտ և անհետաձգելի խնդիր է, վորին մեծ աջակցություն կարող են ցույց տալ աշխատավոր գեղջկուհիները:

Խոշոր անելիքներ ունեն գեղջկուհիները ագրոձեռնարկումների ասպարեզում: Պատժողովները պետք է քննության յենթարկեն ագրոմինիմումը և մշակեն պատժողովների մասնակցության կոնկրետ ձևեր: Բերքատվությունը գարնանացանի կարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում: Բերքատվության բարձրաց-

մեն գործում են գեղջկուհիները խոշոր դեր ունեն կատարելու։ Բերքատվության բարձրացման համար հարկավոր է հողը պարարտացնել։ Գեղջկուհին դիտե, որ հողի պարարտացման համար կա յերկու միջոց—պարարտացնել հողը քիմիական ճեմով և գոմաղան աղբով։ Բոլոր հողերը քիմիական նյութերով պարարտացնել գնալու հնարավոր չի լինի։ Գոմի և այլ աղբերը բերքատու տարիներ կարելոր տեղ գրաւնեն հողի պարարտացման համար։ Այդ ուղղությամբ խոշոր անելիք ունեն մեր գեղջկուհիները։ Անցյալ գարնանացանի ժամանակ մեր շատ պատժաղովները չարաթորյակների միջոցով կարողացել են բակերի գոմերի աղբը, վառարանների և թանիրների մոխիրը հավաքել և դաշտ տեղափոխել։ Այդ փորձը պիտի ոգտագործել և այս տարվա գարնանացանի ժամանակ։

Բերքատվության բարձրացման համար խոշոր դեր կխաղա սերմի զուտումը։ Հենց այժմյանից գեղջկուհիները պիտի անցնեն սերմի զտման աշխատանքներին ոչ թե հաշվով, որպեսզի, համաձայն կենտկոմի վորոշման, մինչև մարտի 1-ը ավարտվի այդ աշխատանքը և իրականացվի կուսակցության լոզունգը, որ վոչ մի հատվածի տուրուց գտերը չդցել հողը։ Պատժաղովները պիտի կազմակերպեն ապրարշավ՝ դաշտերը քարերից և անպիտան հողերից մաքրելու։

Այս աշխատանքները կատարելու համար պատժաղովները պիտի կազմակերպեն բրիգադներ, որոնց պիտի հանձնարարեն գարնանացանի այս կամ այն դարձվածքի խնդիրը կատարել։ Բրիգադների աշխատանքներին պետք է մասնակից դարձնել նաև պատժաղովներից դուրս մնացած չքավոր ու միջակ գեղջկուհիներին։ Պատժաղովները բրիգադներին զեկավարելու և նրանց աշխատանքները ստուգելու նպատակով պիտի հանձնարարեն բրիգադների զեկուցումները։

Բրիգադները պիտի իրար հետ սոցիալիստական մրցում մտնեն և ոգտագործելով աշխատանքի սոցիալիստական մյուս ձևերը՝ պետք է իրագործեն իրենց վրա դրված պարտականությունները։ Բրիգադներին, անհատ գեղջկուհիներին վոգեվորելու և քաջալերելու համար հարկավոր է շրջաններում, գյուղերում հատուկ ֆոնդ ստեղծել՝ նրանցից լավագույններին պարգևատրելու համար։

Գարնանացանի ամբողջ ընթացքում կոլտնտեսությունները կազմակերպված ոգնություն պետք է ցուցնեն մենատնտեսատեր չքավոր, միջակ գեղջկուհիներին՝ նրանց պլանները ժամանակին իրագործելու համար։

Այս տարվա գարնանացանը պիտի ժամանակի գեղջկուհիներին ագրոաշխատանքներին մոտեցնելու և նրանց մեջ ագրոանգրագիտությունը վերացնելու։ Սրճիթ-ընթերցարանները պետք է կազմակերպեն զրույցներ գեղջկուհիների համար՝ ագրո և զոոմինիմումի, տեխնիկական կուլտուրաների, անասուններին խնամելու, գյուղատնտեսության վնասատուներին դեմ պայքարելու և այլ նյութերի մասին։ Գարնանացանի կամպանիայի ընթացքում կազմակերպված բոլոր զանգվածներում՝ տրակտորիստների, գյուղագործիքների մեխանիկների, ագրո-զոոլիագրոնոմների և այլոց՝ պիտի ոգտագործել նաև կանանց։

Գեղջկուհիների լայն խավերն այս տարվա զարնանացանի աշխատանքներին մասնակից դարձնելու նպատակով անհրաժեշտ է հոգ տանել նրանց յերկրորդական, ընտանեկան աշխատանքներից թեթևացնելու մասին: Գեղջկուհին չի կարող ամբողջովին նվիրվել զարնանացանի աշխատանքներին, յեթե նրա յերեխան տանը առանց խնամքի մնա, յեթե նրա վրա դեռ ընկած լինի ճաշ պատրաստելու, լվացք անելու պարտականությունը: Հարկավոր է ծավալել կենցաղային հիմնարկությունների՝ մսուրների, մանկական հրապարակների գոնեը: Սրանք կազատագրեն գեղջկուհուն յերկրորդական աշխատանքից, որանք հնարավորություն կտան նրան լծվելու զարնանացանի աշխատանքներին: Բոլոր կազմակերպությունները՝ Առաջդիմատը, Լուսաժողկոմատը, Կոլտնտեսկենտրոնը, Հայկոոպը, Հայտնարկոոպը և այլն՝ հենց այժմյանից պետք կազմեն կենցաղային հիմնարկությունների կազմակերպման պլանը: Այսպես անհրաժեշտ է կոլտնտեսուհու, պատրամասնորուհու, հրամանատարուհու, հրամանատարի ինքնագործունեությունը: Լենինն ասել է. — «Մենք ստեղծում ենք որինակելի հիմնարկություններ, ճաշարաններ, մսուրներ, լվացքատներ, վորոնք ազատելու յեն կնոջը տնային տնտեսությունից: Բանվորուհիները և գեղջկուհիները իրենք պետք է կազմակերպեն այդ հիմնարկությունները»: Հենց այս դեպքում էլ, յեթե այդ գործի կազմակերպումն իր վրա չվերցնի գեղջկուհին, ապա դժվար կլինի ծավալել այդ հիմնարկությունները և դժվար կլինի ապահովել գեղջկուհիների մասնակցությունը զարնանացանի աշխատանքներին:

Բացի անելիքներ ունեն զարնանացանի կամպանիայի ընթացքում բանվորական պատժողները: Բնականաբար բանվորական պատժողներում զարնանացանի խնդիրները՝ պետք է մշակեն բանվորուհիների կոնկրետ անելիքներն այդ ասպարիզում: Բանվորական պատժողները պետք է ոգնեն գեղջկուհիներին՝ շեֆության, բրիգադների ուղարկման, կենցաղային հիմնարկների կազմակերպման ուղղությամբ: Բանվորուհիները պետք է աշխատեն արդյունաբերությունից աշխատանքի սոցիալիստական ձևերը տանել գեղի գյուղ և ոգտագործել զարնանացանի կամպանիայի անցկացման համար:

Մի խոսքով ամբողջ մասսաների, դրանց թվում աշխատավոր գեղջկուհու լայն խավերի մասնակցությամբ հնարավոր կլինի բայլշևիկյան յերկրորդ զարնանացանի խնդիրները լրացնել, վորն ամենալավ դրամատիկան կլինի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման արագ թափով առաջ տանելու:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻՆԵՐ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒՀԻՆԵՐ, ԶՔԱՎՈՐ ՈՒ ՄԻԶԱԿ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐ, ՀԱՄԱԽՄԲՎԵՔ ԿՈՄԿՈՒՍԻ ՇՈՒՐՋԸ ՑԵՎ ՈՒԺԵՂԱՑՐԵՔ ԲԱՑԼՇԵՎԻԿՅԱՆ ՑԵՐԿՐՈՐԴ ԶԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԾՐԱՆՏԸ:

5·4-

ԳԻՆԸ 4 ԿՈՊ. (5/8 մամուլ)

ՀՀ Ազգային գրադարան
NL0199133

ՊԵՏՀՐԱՏ

С. САРУХАНЯН

Крестьянка на фронте весенней